տայ)՝ եղբայր իւր Աբաս ամս ԻԴ (24)։ Ի սորայ յաւուրս եղև շինութիւն վանուրէից... և (շինեցաւ) եկեղեցի մի անուն Ամենասրբոհոյ Աստուածածնին ի վանքն որ կոչի Սանահին», որից հետո տողամիջում ավելացված է «ԳՃԼ ԹՎԿ», այսինքն՝ 330 + 551 = 881 թվականին։ Դա ակներև սխալ է, որովհետև այդ թվականը չի համապատասխանում Աբասի թագավորության ժամանակներին։ «Քոթուկի» նույն էջում գրված է, որ այդ Աշոտ թագավորը մեռել է հայոց ՆԲ (402+551=953) թվականին՝ 24 տարի թագավորելուց հետո։ Աբասի մահվան այդ թվականը հաստատվում է նաև այլ տվյալներով, բայց թե Սանահնի վանքի Աստվածածին եկեղեցու կառուցման վերաբերյալ վերոհիշյալ թվականի լրացումը «Քոթուկի» մեջ ո՞վ է արել, ի՞նչ աղբյուրի հիման վրա, մեզ հայտնի չէ, մանավանդ որ «Քոթուկի» այդ հատվածը քաղված է Ասողիկի պատմությունից, որտեղ Աստվածածնի կառուցման թվականի մասին ոչինչ չի ասված։

Ըստ երևույթին, Ղրիմեցու՝ Աստվածածնա եկեղեցու կառուցման 400 (951) թվականը վերցված է «Քոթուկի» այս ԳՃԼ ավելագրությունից, որի մեջ նա մտցրել է հավանական ուղղում՝ ԴՃ, ԳՃԼ-ի փոխարեն, որը համապատասխանում է Աբաս Բագրատունու թագավորության նախավերջին թվականին։ Նշանակում է, Աստվածածնա եկեղեցու կառուցումը 400 (951) թվականին վերագրելը անհիմն է, բայց այդ եկեղեցին, ինչպես քիչ առաջ տեսանք, պետք է կառուցված լինի 10-րդ դարի երեսնական թվականին, Կարսի Առաքելոց եկեղեցուց անմիջապես առաջ։

Աստվածածնի տաճարը հետագայում նորոգվել է 1652 թվականին, Սարգիս եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ (արձ. 14), ուստա Սարգսի և նրա աշակերտներ՝ Հերապետի, Դավթի, Հեսուի և Կարապետի ձեռքով (արձ. 65)։

Հավանաբար այս նորոգման ժամանակ է, որ քանդվել և հիմնովին վերաշինվել է տաճարի գմբեթը, փոխվել են ծածկի քայքայված սալքարերը, ջրերի հոսանքից քայքայված քիվի քարերը և հին ձևավոր քարերի փոխարեն դրվել են գլանավոր կարդաձևեր ունեցող պարզ քարեր։ Տաճարի սկզբնական գմբեթն, անշուշտ, նիստավոր թմբուկ է ունեցել, որի փոխարեն այդ նորոգության ժամանակ կառուցվել է շրջանաձև թմբուկով ներկայիս գոյություն ունեցող գմբեթը։

2. Ամենափրկիչ եկեղեցի։ Այս եկեղեցին ամենամեծն է և հանդիսանում է վանքի գլխավոր տաճարը։ Նա կոչվել է նաև կաթուղիկե (ընդհանուր, տիեզերական) եկեղեցի։ Կյուրիկյան տոհմի հիմնադիր Գուրգեն (Կիւրիկէ) թագավորի Սանահնի վանքին նվիրաբերած ջահին վերաբերող հրովարտակի մեջ ասված է.

«Ջահս այս պայծառացուցանէ գաւիթ զսուրբ Աստուածածնիս և զսուրբ կաթուղիկէիս Սանահնոյ» («Քոթուկ», էջ 52)։

Ամենափրկիչը, ինչպես քիչ առաջ նշեցինք, կառուցվել է Խոսրովանուշ հայոց թագուհու ջանքերով և նրա ամուսին Աշոտ Ողորմած թագավորի օժանդակությամբ, իրենց որդիների՝ Գուրգենի, Սմբատի և Գագիկի արևշատության համար, հայոց ՆԺԵ (415) և մեր 966 թվականին։

Սա ևս գմբեթավոր դահլիճ է, դրսից երկարաձիգ ուղղանկյուն քառանկյունի, ներսից՝ խաչաձև։ Տաճարի չորս անկյունների վրա զետեղված են կրկնահարկ ավանդատներ, իսկ արևելյան կողմում՝ բարձրադիր և կիսաշրջան ավագ խորանը։ Գմբեթը նստած է ավանդատների անկյուններից բարձրացող չորս որմնամույթերի վրա։

Տաճարի արևելյան պատին, դրսից շատ բարձր կան երկու մարդկանց բարձրաքանդակներ, որոնք եկեղեցու կաղապարը ձեռներին ներկայացնում են տաճարը կառուցել ավողները։ Դրանցից մեկի գլխին գրված է Կիւրիկէ թագաւոր, մյուսի գլխին՝ Սմբատ թագաւոր։

Դրանցից մեկը Բագրատունյաց Աշոտ Ողորմած թագավորի որդի Գուրգենն է, որ հիմնադիր եղավ Լոռիի թագավորության, իսկ մյուսը՝ նրա եղբայր Սմբատ Տիեզերակալ Անիի թագավորը։

Ուսումնասիրողներից մի քանիսը (Brosset, Մովսիսյան, Մելիքսեթ-բեկ), հակառակ գոյություն ունեցող փաստերի, այն կարծիքն են հայտնել, որ այդ բարձրաքանդակները Սմբատ Տիեզերակալինը և նրա եղբայր Կյուրիկե (Գուրգեն) առաջինինը չեն, այլ Կյուրիկյան թագավորության հետագա սերունդների ներկայացուցիչ Դավիթ Անհո-